

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՆԵՐՍԵՆ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի՝
ակադ. Հրանդ Թամրազեանի անուան
Հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ

ԹԱԳՈՒՀԻ ՇԻՇՄԱՆԵԱՆ (ՕՐ. ՄԵՆԻԿ), ԱՇԽԱՏԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ԱԼ. Ա. ՄԱԿԱՐԵԱՆԻ, ԵՐԿԵՐ, ԵՐԵՒԱՆ, ՆԱԻՐԻ, 2015, ԷՁ 203:

Փրոֆ. Ալ. Մակարեանի աշխատասիրութեամբ լոյս տեսած Թագուհի Շիշմանեանի երկերի ամբողջական ժողովածուն բազմաշխատ և մեծարժէք աշխատութիւն է: Գիտական կերպով և ձեռագրական համեմատութեամբ կատարուած այս գործը, ինքնին ապերախտ և ծանրաշխատ, սակայն անփոխարինելի աշխատութիւն է, որի կարիքը խղճամիտ և լուրջ հրատարակութեամբ մինչ այս չէր եղել: Երախտապարտ ենք Փրոֆ. Ալ. Մակարեանին՝ Թագուհի Շիշմանեանի յաւերժական յիշատակին նուիրուած արժէքաւոր ու անթառամ այս կողթողի համար:

Ժողովածուն առաջին փորձն է՝ մի գրքում ամփոփելու վիպասան Մերենցի (Յովսէփ Շիշմանեան) վաղամեռիկ դստեր՝ Թագուհի Շիշմանեանի (գրական կեղծանունը՝ օրիորդ Մենիկ, (1859-1885) գրական տպագիր ու անտիպ ժառանգութեանը:

Սոյն ժողովածուն ստեղծելու մտայղացման մասին Փրոֆ. Ալ. Մակարեանը գրքի 45-46-րդ էջերում պատմում է, թէ ինչպէս ժամանակին Պետրոս Ադամեանը, այնուհետեւ Արփիար Արփիարեանը շատ մարդկային, ազնիւ ու սրտաբուխ ցանկութիւններից՝ ուղղուած պատկառելի վիպասան Մերենցին՝ մէկտեղել վաղամեռիկ դստեր գրական պատանդիկները, «շարագրիլ նորա կենաց գողտրիկ վէպը» և մի առաձին հատորով տպագրել՝ իբրեւ անկորնչելի յիշատակ ու յուշարձան արժանաւոր գրագիտուհու. «...Մերենց կրնայ մահաւորան մը կանգնել ի յիշատակ տաւաբախտիկ կնոջ և գրագէտին՝ ամփոփելով ի մի և կազմելով մի հատոր նորա ցան և ցիր բոլոր գործերն և կենսագրութիւն մը ի նմա՝ վշտաբեկ հօրը տխուր շէշտերովը:

Եւ օր մը երբ սիրուն մանկիկներն լինին աղջիկ, գտնեն ի յիշատակ իրենց մօրն մահաւորան մը որոյ նմանը խիստ բշերն կրնան ունենալ.

Որ սիրոյ չթողու ժառանգ, նա եւ եք ոչ բերկրի ի շիրմէն:

Եւ ի՞նչ ժառանգներ աւելի պատուական քան երեք զաւակներ ու սիրուն գիրք մը:

Եւ երբ Ադեմսանտր Մելիք-Ազարեանց շրջապատեալ իւր զաւակներէն խօսի նոցա իրենց մօր յիշատակի վրայ, այն ատեն պիտի գտնէ սրտին մխիթար մը, սփոփանք մը և պիտի ըսէ. «Կեանք, սէր բոլորովին ունայնութիւն չեն»¹:

Սակայն, դժբախտաբար, ո՛չ կաթուածահար Մերենցը և ո՛չ էլ երեք որբերի հոգսերի ու բարոյա-հոգեբանական ծանր բեռան տակ կրած Ալեքսանտր Մելիք-Ազարեանցը

¹ Հրազդան (Արփիար Արփիարեան), Օրումն կեանք. Տիկին Թագուհի Մելիք-Ազարեան, «Արեւիկ», 1885, թիւ 339, 18 փետրուարի:

չկարողացան հոգալ գրագիտուն հու թողած գրական ժառանգությունը, և չիրականացաւ Արփիար Արփիարեանի՝ նրանց ուղղուած «սիրուն գիրք մը» հրատարակելու փափաքը: Ծերենցից բացի՝ բնականաբար ուրիշ որեւէ մէկը չէր կարող լաւագոյնս իրագործել այդ աշխատանքը: Սակայն Փրոֆ. Ալ. Մակարեանը, գրքի 46-րդ էջում կանխաւ ներողութիւն խնդրելով վիպասան հօր դերն ստանձնելու իրաւունքն իրեն վերապահելու համար, ասում է, թէ հարազատի սիրով է հրատարակում այս գիրքը, որն անտարակոյս պիտի դառնայ պատմական ցաւալի հանգամանքների բերումով այսօր արդէն անշիւրիմ մնացած վաղամեռիկ Թագուհի Շիշմանեանի փոքրիկ, բայց մնայուն յուշարձանը, մի գրագիտուն, որն ակնթարթի պէս փայլատակեց հայրենի գրականութեան երկնակամարում ու ասուպի պէս անհետացաւ՝ սերունդներին թողնելով յիշարժան լուսածերպեր:

Աշխատութեան առաջին մասը, որը կրում է «Թագուհի Շիշմանեան՝ Արեւմտահայ գրականութեան կորուսեալ ասուպը» վերնագիրը, լուրջ և գնահատելի ուսումնասիրութիւն է, արժանի՝ ուշի ուշով կարդալու: Այս ընդհանուր վերանգիրն ունի իր ենթամասերը, որոնցով ներկայացվում է «Համայն մանկանց Թագուհին», նրա «Անաւարտ կենսագրութիւն»-ը, նամակները և յուշագրութիւնները, քրոնիկները և իհարկէ «Գարնան մի ասուպ» նորավէպը:

«Համայն մանկանց Թագուհին» բաժնով մեզ յայտնի է դառնում, որ Թագուհի Շիշմանեանը սիրուած է եղել շատերի կողմից և վայելել է ժամանակի գրողներ՝ Մատթէոս Մամուրեանի, Արփիար և Տիգրան Արփիարեանների, Գրիգոր ու Երուանդ Օտեանների, Պետրոս Ադամեանի համընդհանուր յարգանքը: 8 տարեկանում արժանացել է հայոց առաջին վիպասանուհի՝ Սրբուհի Վահանեանի (Տիւսապ) ուշադրութեանն ու բացառիկ համակրանքին. վերջինս աղջնակին նուիրած իր «Ուղերձ սիրոյ» (1867) բանաստեղծութեան մէջ, որն ի դէպ, շուրջ կէս դար՝ 48 տարի, անտիպ էր մնացել, դրուատանքի խօսքեր է ասել Թագուհի (մտերիմները նրան Թագուհի էին անվանում) մտաւոր ու ֆիզիքական բարեմասնութիւնների մասին:

«Անաւարտ Կենսագրութիւն» ենթաբաժնում Փրոֆ. Ալ. Մակարեանը ներկայացնում է Կ. Պոլսում ծնուած Թագուհուն, ով 1875-ին «յոյժ գովելիս» վարքով և «փոյթ ուսումնասիրութեան, որով լցեալ զութամեայ ընթացս ուսման» վկայականով աւարտում է Օրթագիւղի Ս. Հռիփսիմեանց վարժարանը: 15 տարեկանում զրկւում է մօրից, և նրա դէմքից անհետանում է խինդն ու ծիծաղը. հանկարծ կերպրանափոխւում է՝ հագնելով սեւերը:

52-ամեայ հայրը ջանք չի խնայում մեղմելու զգայուն դստեր հոգու մորմոքը: Եւ երբ 1876-ին Շիշմանեանները հաստատւում են Կիպրոսի Նիկոսիա քաղաքում, և Ծերենցն ստանձնում է տեղի հիւանդանոցի տնօրէնի պաշտօնը, Թագուհին իր վրայ է վերցնում ոչ միայն հօր խնամքի պարտականութիւնը, այլեւ դառնում է նրա խոհերի ու մտորումների ժրաջան արձանագրողը:

Այս բաժնից իմանում ենք նաեւ, որ Թագուհին քաջատեղեակ էր ոչ միայն հայրենի, այլեւ եւրոպական գրականութեանը. նախընտրում էր Շէքսպիր, Գէոթէ, Ռուսօ, Մոլիեր, Լամարթին, Բալզակ, Հիւկօ, Աքոթ, Տիւմա և յատկապէս Ալֆրետ դը Միւսեն: Տիրապետել է եւրոպական մի քանի լեզուների, յատկապէս ֆրանսերէնի իմացութիւնը նրան հնարաւութիւն է տուել կատարելու բազմաթիւ թարգմանութիւններ:

Խորագիրն ինքնին վկայում է, որ ողբերգականօրէն շատ կարճ է տեւել Թագուհի Շիշմանեանի երկրային կեանքը. դուրեանական «երկնքի հիւանդութիւնը»՝ թոքախտը, բոյն էր դրել նաեւ այդ զգայուն ու նուրբ գրագիտուն կրծքում: Նրան չկարողացան փրկել ո՛չ լաւագոյն բժիշկները և ո՛չ էլ հոգատար ամուսինը՝ ազգային բարերար Ալեքսանտր Մելիք-Ազարեանը:

«Գարնան մի ասուպ» նորավէպը սկսւում է 47-րդ էջից, որը 1883-ին Թագուհի Շիշմանեանը «Օրիորդ Մենիկ» գրական կեղծանուամբ տպագրել է նախ՝ «Արեւելեան մամուլում», այնուհետեւ նոյն թուականին՝ առանձին գրքով: «Գարնան մի ասուպը» Թագուհի Շիշմանեան-Մենիկը անուանել է նորավէպ, որը հայ գրականութեան մէջ ժանրային անուանումը կիրառւում էր առաջին անգամ:

«Գարնան մի ասուպը» ունի ոչ մեծ ծաւալ, փոքրաթիւ կերպարներ, դէպքերի ընդգրկման համեմատաբար փոքր ժամանակահատուած և միաբնակ՝ այսինքն մէկ հիմնական գիծ ունեցող դիպաշար: Սակայն նկատելի են նաեւ որոշակի շեղումներ՝ դէպի պատմութեան կամ վիպակի ժանրը ձգտող դիպաշարային աղօտ ճիւղաւորումներ, ակարատուն տրոհումներ, շուրջ մէկ տասնեակ հերոսների յիշատակումներ, նամակագրական ու օրագրային ոճաւորումներ և այլն: Ասել է թէ՛ «Գարնան մի ասուպը», ապահովելով հանդերձ նորավէպի ժանրային հիմնական չափորոշիչները, դեռեւս գտնւում էր «միջժանրային» տիրոջթններում: Դիպաշարը յագեցած չէ գործողութիւններով. անգամ այն դրուագներում, երբ թուում է, թէ երկը պիտի ունենայ դիպաշարային ինքնատիպ անցումներ, իւրօրինակ լուծումներ, հեղինակը ինչ-որ բան թողնում է կիսաւարտ՝ կարծես ընթերցողին մղելով սեփական երեւակայութեամբ լրացնելու այդ «բացը»:

Աւելի քան 130 տարի առաջ ստեղծուած «Գարնան մի ասուպը» թէեւ հիմնականում ունի գրական-պատմական արժէք, գաղափարական ու գեղարուեստական երբեմն խոցելի կողմեր, այնուամենայնիւ սիրոյ, ընտանիքի, երջանկութեան ու բարոյականութեան իր արծարծած խնդիրներով այսօր էլ յուզում է ընթերցողին:

«Կայծակնացայտ քրոնիկները» առաջին անգամ լոյս են տեսել «Մասիս» լրագրի էջերում «Դէս ու դէն» խորագրի տակ «Օ. Մ» (օրիորդ Մերենց) ստորագրութեամբ: Քրոնիկները թէեւ սակաւաթիւ են, այնուամենայնիւ, ինչպէս կ'ասեր Արփիար Արփիարեանը, դրանք «գեղեցիկ տիպարներ են թեթեւ ոճի»²: Գրուած են եւրոպական քրոնիկագրութեան չափանիշներով՝ թեթեւ ու ազատ ոճ, անկաշկանդ ու անաշու հայեացք, և, որ թերեւս ամենակարեւորն է, հրապարակագրուհին տեղեկատուութեանը, վաւերական փաստին հմտօրէն ընդելուզում է ինքնատիպ հանդերձանքը՝ խօսքը դարձնելով էլ աւելի պատկերաւոր ու կենդանի, անմիջական ու ազդեցիկ:

Օրիորդ Մենիկի Քրոնիկներն ունեն նաեւ ազգագրական արժէք: Գրագիտուհին դիպուկ բնորոշումներ է տալիս յատկապէս ազգերին ներկայացնելիս: Իրեն հաճելի նիւթի մասին խօսելիս քրոնիկագրի գրիչը ձեռք է բերում զուարթ երանգներ, հեղինակը դառնում է կատակաբան ու մէջբերում ժողովրդական կենդանի արտայայտութիւններ՝ շմոռանալով դրանք հասկանալի դարձնել արեւմտահայութեանը: Յաճախ կիրառւում է դիպուկ համեմատութիւններ ու հակադրութիւններ, ժողովրդական բանահիւսութեան բեկորներ՝ բառ ու բան, առածներ ու ասացուածքներ կամ աստուածաշնչեան արտայայտութիւններ:

«Յիշողութիւններ» բաժինը մի կողմից ամբողջացնում է Մերենցի կեանքի ու գրական, հանրային-քաղաքական գործունէութեան պատկերը, երկերի ստեղծագործական պատմութիւնը, միւս կողմից բացայայտում, ճշդում ու սրբագրում են այս կամ այն նշանաւոր մտածողի դիմանկարը, կենդանագրում հայոց պատմութեան 1870-80-ականների ժամանակաշրջանը, որի ճանապարհին բարեկիրթ գրագիտուհին յաճախ դրսեւորում է զարգացած ճաշակ ու սթափ միտք:

Իր յուշերում Թագուհի Շիշմանեանը ճշգրտում է Մերենցի՝ 1875-ի ամռանը Բերայի հիւանդանոցում բժշկի պաշտօնից հեռացուելու պատճառը: Կարեւոր տեղեկութիւններ է հաղորդում նաեւ Սրբուհի Տիւսապի կենսագրութեան ու ստացած

² Տե՛ս նոյն տեղը:

կրթութեան որոշ մանրամասների ամբողջացման տեսակետից:

«Յիշողութիւններ» բաժնում տեղ են գտել նաեւ Ծերենցի ընտանիքի, Թագուհի Շիշմանեանի ամուսնու՝ ազգային բարերար Ալեքսանտր Մելիք-Ազարեանցի, Թագուհու և հօր՝ Ծերենցի, Թիֆլիսում գտնուող այն տան, որտեղ կեանքի վերջին տարիներին ապրել է Թագուհի Շիշմանեանը, և Ծերենցի տապանաքարի արժէքաւոր լուսանկարները:

Վերջին՝ «Նամականի» բաժինը, Թագուհի Շիշմանեանի 1879-ին Թիֆլիսից գրած նամակներն են, որոնք կենդանագրում են հայոց արեւելեան գաղթօճախի կեանքի պատկերները՝ իւրակերպ կենցաղով ու վարքութեամբ, մարդկային յարաբերութիւններով՝ այնքան տարբեր պոլսահայ միջավայրից: Նրա գրիչը տեղ-տեղ ձեռք է բերում քննադատական ու հեգնական երանգներ Թիֆլիսահայ գաղթօճախում յաճախադէպ օգտագործուող «նիհիլիսթ», «սոսիալիսթ» և «որչափ ուզիս իսթով» վերջացող բառերի կամ էլ վարժարանների «գերմանական իտեալական դասատուների» նկատմամբ: Ակնյայտ է, սակայն, որ գրագիտուհին երբեք չի չարախնդում. արեւելահայոց «շատ պակասութիւնների» մէջ նկատում է էականը՝ համընդհանուր հայրենասիրութիւնը. «Հարուստ և աղքատ, այր և կին, ամէն կարգի մարդ հայրենասէր է»³:

Երկերի այս ամբողջական ժողովածուն փակում է «Ծանօթագրութիւններ» բաժնով:

Ամբողջացնելով սոյն գրախօսականը պէտք է ասել, որ Փրոֆ. Ալ. Մակարեանը իր աշխատութիւնը կատարել է արխիւային նիւթերի, ձեռագիրների համեմատութեամբ, որով իր ճշդումները կշիռ և արժէք ունեն: Որակով այս պատկանելի հրատարակութիւնը, հաւատում ենք, թէ գինն է մեծ ու երկարատեւ ճիգերի ու զոհողութիւնների, որ գովելի ջանասիրութեամբ ու հանրութեան համար օգտակար գործ արած լինելու գիտակցութեամբ է կատարել հեղինակը:

Փակում ենք գրախօսականը, կրկին շնորհակալ լինելով Փրոֆ. Ալ Մակարեանին, որ կարողացել է մոռացութիւնից փրկել և լոյս աշխարհ հանել Թագուհի Շիշմանեան-Մենիկի երկերի ամբողջական այս մեծարժէք աշխատութիւնը:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Սէրը ամէն տեղ ներկայ է, սակայն կարգ մը անհատներու մօտ ան պատնէշուած է վախի պատճառով:

Եթէ կը քննադատես և յանցանքը միշտ կը բեռցնես ուրիշներու վրայ, կը նշանակէ թէ դուն կը խուսափիս անձիդ հետ առնչուած իրականութենէ մը:

Մարդ միշտ պարտի պարապութիւն մը, միջոց մը ստեղծել իր սրտին մէջ, որպէսզի սէրը գայ ու լեցնէ զայն:

Միակ ուժեղը՝ մարդն է, որ կրնայ սէրը ճանչնալ. միայն սէրն է որ կրնայ գեղեցկութիւնը պահել, և միայն գեղեցիկն է որ կրնայ արուեստ ծնիլ:

³ Շիշմանեան Թ. (Օր. Մենիկ), աշխտ. Ալ. Մակարեանի, Երկեր, Երեսմ, Նաիրի, 2015, էջ 174: